# ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԾՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԾՐԱԳՐԻ

## ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Տարրական դպրոցի ծնողական համալսարանի ծրագիրը նախատեսված է կրտսեր դպրոցական տարիքի երեխաներ ունեցող ծնողների համար:Այն կազմված է թեմատիկ սկզբունքով: Թեմաներն ընտրվել են ՀՀ դպրոցներում մեր կատարած ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա՝ ի պատասխան ծնողների, մանկավարժների և աշակերտների կողմից բարձրացված հիմնախնդիրների : Ծրագրում ներառված թեմաները վերաբերում են .

- Ընտանիքում Երեխայի դաստիարակության ձևերին ու բովանդակությանը,
- երեխային ճանաչելու ու նրան բացահայտելու ձևերին ,
- դպրոց-ընտանիք համագործակցության ամրապնդման խնդիրներին,
- երեխայի ֆիզիկական ու հոգեբանական անվտանգության ապահովման և ընտանիքում ու դպրոցում երեխայի համար բարենպաստ մթնոլորտի ստեղծման ձևերին,
- ընտանիքում ու դպրոցում երեխաների նկատմամբ հումանիստական վերաբերմունք և հարաբերություններ հաստատելուն և այլն :

Տարրական դպրոցի ծնողական համալսարանի ***ծրագրի նպատակն է.****ընտանեկան և դպրոցական դաստիարակության ինտեգրումը, երեխայի համար դաստիարակչական միասնական միջավայրի ստեղծումը:*

***Ծրագրի խնդիրներն են.***

1,Կրտսեր դպրոցական տարիքի երեխաներ ունեցող ծնողներին՝ ա/մանկավարժահոգեբանական, առողջապահպանական , իրավական գիտելիքներով և դաստիարակչական կարողություններով ու հմտություններով զինելը:

բ/ Ընտանեկան դաստիարակության գործընթացքում ծագած պրոբլեմները բացահայտելու և գործնականում դրանց ճիշտ լուծումները իրականացնելու հմտություններ ձեռք բերելու հարցում ծնողներին աջակցելը:

**Ծրագրի նպատակն ու խնդիրները իրականացնելու համար .**

Տարրական դպրոցի յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում նախատեսված է անցկացնել 9 պարապմունք: Յուրաքանչյուր պարապմունքի ժամանակ ունկնդիրները կմասնակցեն փոխգործուն դասախոսության, կկատարեն խմբային կամ անհատական գործնական աշխատանք՝տեսական գիտելիքները պրակտիկայում ամրապնդելու համար: Նրանք հնարավորություն կունենան նաև հանդիպելու տարբեր մասնագետների/բժիշկ, մանկավարժ, հոգեբան, իրավաբան/ հետ՝ իրենց հուզող հարցերը քննարկելու և դրանց լուծման ուղիների վերաբերյալ խորհրդատվություն ստանալու համար:

**Ծնողական համալսարանի աշխատանքներին մասնակցելը կնպաստի՝** .մեծահասակների մանկավարժական գիտելիքների և մանկավարժական կուլտուրայի մակարդակի բարձրացմանը, նրանց դաստիարակչական հմտությունների ձևավորմանը,այս ուղղությամբ անհրաժեշտ գործիքակազմի հարստացմանը, երեխայի դաստիարակության գործընթացում ծնողների կատարած աշխատանքի արդյունավետության բարձրացմանը:

**Դպրոցում ծնողական համալսարանի գործունեությունը համակարգում են.** դպրոցի ծնողական կոմիտեի նախագահը և դաստիարակության գծով փոխտնօրենը, իսկ անմիջական **կազմակերպիչը՝** տարրական դասարանների ուսուցիչն է: